

Սբ. Պետրոս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

17231 Sherman Way. Van Nuys. CA 91406. 818-344-4860

Օգոստոս 10, 2019

Սիրելի Ծնողներ,

Բարի գալուստ Կիրակնօրեայ Վարժարանի 2019-2020 տարեշրջան: Կիրակնօրեայ Վարժարանի բացման օրը պիտի ըլլայ Կիրակի, Սեպտեմբեր 8, 2019ին:

Դասաւանդման համար պիտի օգտագործենք “We Believe” ուսումնական ծրագիրը՝ ինչպէս որ առաջարկուած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի (CEC) կողմէ: Այս ծրագիրը պիտի հայթայթէ ուսուցման ամուր հիմք՝ Հայ Առաքելական հաւատքի եւ մշակութային ժառանգութեան, ինչպէս նաեւ Քրիստոսի կեանքի եւ աստուածաշնչական դասերու, որոնք պիտի քաջալերեն ձեր զաւակը՝ զարգացնելու ուժեղ քրիստոնէական հաւատք:

Կիրակնօրեայ Վարժարանի դասաւանդութիւնները կը սկսին իւրաքանչիւր Կիրակի օր առաւօտեան ժամը 10:30ին եւ կ'աւարտին կէսօրուայ ժամը 12:00ին: Որպէսզի դասաժամերը օգտագործուին իրենց ամբողջական կարելիութեամբ եւ սահմանափակ ընդհատումներով, բարեհաճեցէք իւրաքանչիւր Կիրակի օր ձեր զաւակները ճշդապահօրէն բերել իրենց դասարանները: Բարեհաճեցէք նաեւ ճշդապահօրէն ընդունիլ ձեր զաւակին՝ վարժարանէն արձակման պահուն: Նախադարձական, մանկամտօրի եւ առաջին տարուայ ուսանողները արձակման համար ծնողներու կողմէ պիտի ընդունուին իրենց դասարաններու մէջ: 2-12 դասարաններու աշակերտները պիտի արձակուին խաղահրապարակ:

Եթէ ցարդ ձեր e-mailի հասցէն չէք փոխանցած մեզի, ապա բարեհաճեցէք այն մեզ հաղորդել, որպէսզի մեր կողմէն կարող ըլլանք ձեզ անհրաժեշտ տեղեկութիւնները փոխանցել առանց հապաղումի: Եթէ կը փափաքիք, կարող էք ձեր հասցէն մեզի փոխանցել stpsundayschool@stpeterarm.org-mailով, որպէսզի ձեր e-mailը աւելցնենք մեր հասցէարանին մէջ:

Կիրակնօրեայ Վարժարանի ուսուցումը անվճար է եւ զերծ որեւէ ծախսերէ: Բոլոր 3-17 տարեկան երեխաները իրաւասու են արձանագրուելու: *(Կը խնդրուի նկատի ունենալ որ վարժարան ընդունման համար երեխայի նուագագոյնը 3 տարեկան ըլլալու պայմանը պիտի խստիւ կիրարկուի. Ծննդեան տարիքը որոշելու սահմանը Դեկտեմբերի 31ն է):*

Կ'ակնկալենք որ յաջող տարի մը ունենանք, եւ անկեղծօրէն կը գնահատենք ձեր հետաքրքրութիւնն ու տւեական աջակցութիւնը մեր ծրագրին: Եթէ ունիք ռելե մտահոգութիւններ կամ հարցեր, ապա կը խնդրենք ազատօրէն հաղորդակցուէք ինձի հետ:

Աղօթաբար,
Տէրիք Ղուկասեան
Տնօրէն Կիրակնօրեայ Վարժարանի